ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԸ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Դատական օրենսգիրք) 81-րդ հոդվածի 7-րդ մասը «այլ» բառից առաջ լրացնել «նույն ատյանի» բառերով:

Հոդված 2. Դատական օրենսգրքի 123-րդ հոդվածը լրացնել նոր 6.1-րդ մասով.

«Վերաքննիչ դատարաններում դատավոր նշանակվելու համար դատավորների առաջխաղացման ենթակա թեկնածուների ցուցակում չեն կարող ընդգրկվել Բարձրագույն դատական խորհրդի անդամները բարձրագույն դատական խորհրդի անդամ ընտրվելուց հետո հինգ տարվա ընթացքում՝ անկախ մինչև պաշտոնավարման օրենքով սահմանված ժամկետի ավարտը լիազորությունները դադարեցվելու հանգամանքից»:

Հոդված 3. Դատական օրենսգրքի 132-րդ հոդվածը լրացնել նոր 2.1-րդ մասով.

«Վճռաբեկ դատարանում դատավոր նշանակվելու համար առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակում չեն կարող ընդգրկվել Բարձրագույն դատական խորհրդի անդամները բարձրագույն դատական խորհրդի անդամ ընտրվելուց հետո հինգ տարվա ընթացքում՝ անկախ մինչև պաշտոնավարման օրենքով սահմանված ժամկետի ավարտը լիազորությունները դադարեցվելու հանգամանքից»:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

Կարգավորման ենթակա ոլորտի սահմանումը և խնդրի սահմանումը.

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» սահմանադրական օրենքի նախագծի մշակումը բխում է Բարձրագույն դատական խորհրդում դատավոր անդամների մշտական համամասնությունն ապահովելու, վերաքննիչ դատարաններում, Վճռաբեկ դատարանում առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակները կազմելու և հաստատելու արդյունքում ծագած մի շարք սահմանադրաիրավական կարգավորման գործնական խնդիրների լուծման անհրաժեշտությունից:

Առկա իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը.

ՀՀ Սահմանադրության 174-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ Բարձրագույն դատական խորհուրդը կազմված է տասն անդամից:

Բարձրագույն դատական խորհրդի հինգ անդամներին ընտրում է դատավորների ընդհանուր ժողովը՝ դատավորի առնվազն տասը տարվա փորձառություն ունեցող դատավորների կազմից: Բարձրագույն դատական խորհրդում պետք է ընդգրկվեն դատավորներ **բոլոր ատյանների դատարաններից**: Դատավորների ընդհանուր ժողովի կողմից ընտրված անդամը չի կարող լինել դատարանի նախագահ կամ Վճռաբեկ դատարանի պալատի նախագահ:

Դատական օրենսգրքի 76-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ բարձրագույն դատական խորհրդի դատավոր անդամներին ընտրում է Ընդհանուր ժողովը՝ բոլոր ատյանների դատարանների դատավորներից հետևյալ համամասնությամբ.

1) Վճռաբեկ դատարանից՝ մեկ անդամ,

2) վերաքննիչ դատարաններից՝ մեկ անդամ,

3) առաջին ատյանի դատարաններից՝ երեք անդամ, ընդ որում՝ մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններից՝ առնվազն մեկ անդամ:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Բարձրագույն դատական խորհրդում պետք է ներկայացված լինեն բոլոր մասնագիտացումների դատավորները:

Վերոնշյալ նորմերի վերլուծությունից հետևում է, որ ՀՀ Մայր օրենքում հստակ ամրագրում է գտել այն մոտեցումը, որ Բարձրագույն դատական խորհրդում պետք է ընդգրկվեն դատավորներ բոլոր ատյանների դատարաններից: ՀՀ Սահմանադրության նշված հոդվածը մասնավորեցվել է Դատական օրենսգրքի 76-րդ հոդվածում, որով սահմանվել է, որ Բարձրագույն դատական խորհրդում Վճռաբեկ դատարանից պետք է լինի մեկ անդամ, վերաքննիչ դատարաններից՝ մեկ անդամ, իսկ առաջին ատյանի դատարաններից՝ երեք անդամ:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի կանոններով մեկնաբանելիս՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթների, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը՝ բացահայտելով օրենսդրի նպատակը, հարկ է նշել, որ թե՛ Սահմանադրի և թե՛ Օրենսդրի նպատակն է եղել Բարձրագույն դատական խորհրդում ապահովել դատավոր անդամների վերը նշված մշտական համամասնությունը: Սահմանադիրն ու Օրենսդիրը չէին կարող նախատեսել մի իրավիճակ, երբ այդ կարգավորումը լի լիներ ներքին հակասություններով:

Այս տեսակետից Բարձրագույն դատական խորհրդում դատավոր անդամների մշտական համամասնության պահպանումն ինքնանպատակ չէ:

Ներկայացված օրենսդրական կարգավորումների և կատարված վերլուծությունների լույսի ներքո պետք է նշել, որ Սահմանադրի և Օրենսդրի նպատակն է Բարձրագույն դատական խորհրդում ապահովել դատավոր անդամների վերը նշված մշտական համամասնությունը ինչպես Բարձրագույն դատական խորհրդի ստեղծման պահին, այնպես էլ նրա գործունեության ամբողջ ժամանակահատվածում: Մինչդեռ՝ ՀՀ դատական իշխանության պաշտոնական կայքի (court.am) ուսումնասիրությունից երևում է, որ թեև Բարձրագույն դատական խորհրդի ստեղծման պահին պահպանված է եղել դատավոր անդամների համամասնությունը, սակայն հետագայում տեղափոխությունների հետևանքով այն խախտվել է, որի արդյունքում ստեղծվել է հակասահմանադրական իրավիճակ:

Բարձրագույն դատական խորհրդում դատավոր անդամների մշտական համամասնության պահպանմանն է վերաբերում նաև Դատական օրենսգրքի 81-րդ հոդվածի 7-րդ մասի իրավակարգավորումը, որտեղ անդրադառնալով **Բարձրագույն դատական խորհրդի դատավոր անդամի այլ դատարան**

տեղախոխվելու հանգամանքին, սահմանվել է, որ եթե **Բարձրագույն դատական խորհրդի դատավոր անդամը տեղափոխվում է այլ դատարան** կամ ձեռք է բերում ռեզերվային դատավորի կարգավիճակ, ապա նա շարունակում է պաշտոնավարել Բարձրագույն դատական խորհրդի անդամի պաշտոնում: Հարկ է նշել, որ «այլ դատարան» հասկացությունը պետք է հասկանալ նույն ատյանի մեկ այլ դատարան, իսկ Վճռաբեկ դատարանի դեպքում՝ մեկ այլ պալատ:

Հակառակ պարագայում կխախտվի Բարձրագույն դատական խորհրդում դատավոր անդամների համամասնության պահպանման սահմանադրական և օրենսդրական պահանջները: Չի կարող լինել մի իրավիճակ, երբ օրենքի մեկնաբանումը բերի հակասահմանադրական իրավիճակի: Այս տեսակետից «այլ դատարան» եզրույթը չի կարող մեկնաբանվել այնքան լայն, որի արդյունքում խախտվի սահմանադրական նորմը:

«Այլ դատարան» հասկացության մեկնաբանումը որպես նույն ատյանի մեկ այլ դատարան բխում է նաև հետևյալ նորմերի համակարգային վերլուծությունից:

Դատական օրենսգրքի 42-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ դատավորի անուն-ազգանունը հանվում է գործերի բաշխման ցանկից՝ **այլ դատարան** գործուղվելու դեպքում՝ **գործուղման** և դրան նախորդող տասնօրյա ժամանակահատվածով (…):

Իսկ նույն օրենսգրքի 56-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ այն դեպքում, երբ որևէ դատարանի բնականոն գործունեությունը չի կարող ապահովվել դատավորների թվի օբյեկտիվորեն առաջացած անբավարարության հետևանքով, Բարձրագույն դատական խորհրդի որոշմամբ **<u>նույն ատյանի համապատասխան մասնագիտացման մեկ այլ դատավոր</u> իր համաձայնությամբ կարող է մինչև մեկ տարի ժամկետով գործուղվել առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան:**

Վերոնշյալ նորմերից հետևում է, որ **«այլ դատարան» հասկացությունը նույնացվում է նույն ատյանի մեկ այլ դատարանի հետ:**

Նշվածի համատեքստում, անդրադառնանք մեկ այլ խնդրի ևս:

ՀՀ Սահմանադրության «Բարձրագույն դատական խորհրդի լիազորությունները» վերտառությամբ 175-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի և Դատական օրենսգրքի 89-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Բարձրագույն դատական խորհուրդը՝

1) կազմում և հաստատում է դատավորների թեկնածուների, ներառյալ առաջխաղացման ենթակա թեկնածուների ցուցակները,

2) Հանրապետության նախագահին առաջարկում է նշանակման ենթակա, ներառյալ առաջխաղացման կարգով նշանակման ենթակա դատավորների թեկնածուներին:

Ինչպես ՀՀ Սահմանադրությամբ, այնպես էլ Դատական օրենսգրքով ՀՀ բարձրագույն դատական խորհրդին է վերապահված դատավորների թեկնածուների, ներառյալ՝ առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակները կազմելու և հաստատելու, ինչպես նաև Հանրապետության նախագահին նշանակման ենթակա, ներառյալ՝ առաջխաղացման կարգով նշանակման ենթակա դատավորների թեկնածուներին առաջարկելու լիազորությունները:

Դատական օրենսգրքի 123-րդ հոդվածի 6-րդ մասով, ինչպես նաև 132-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված են, թե ովքեր կարող են ընդգրկվել վերաքննիչ և Վճռաբեկ դատարաններում դատավոր նշանակվելու համար դատավորների առաջխաղացման ենթակա թեկնածուների ցուցակում:

Վերոնշյալ հոդվածներից հետևում է, որ Բարձրագույն դատական խորհրդի դատավոր անդամները կարող են ընդգրկվել վերաքննիչ և Վճռաբեկ դատարաններում առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակներում (եթե հաշվի չենք առնում վերը նշված հիմնավորումները)՝ նկատի ունենալով, որ իրենց մասնագիտական փորձառությամբ բավարարում են վերոնշյալ պաշտոններին առաջարկվող պահանջներին, մասնավորապես՝ Բարձրագույն դատական խորհրդի դատավոր անդամներն ունեն դատավորի առնվազն տասը տարվա փորձառություն:

Ստեղծվում է մի իրավիճակ, երբ վերաքննիչ և Վճռաբեկ դատարաններում առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակներում կարող են ընդգրկվել Բարձրագույն դատական խորհրդի անդամները: Հատկանշական է հատկապես այն հանգամանքը, որ վերոնշյալ ցուցակներն ի վերջո հաստատվում են հենց Բարձրագույն դատական խորհրդի կողմից: Միևնույն ժամանակ, հարկ է նշել, որ Բարձրագույն դատական խորհրդի անդամներն օբյեկտիվ կամ սուբյեկտիվ հանգամանքերով պայմանավորված ստանում են առավելություն այլ թեկնածուների նկատմամբ՝ նկատի ունենալով, որ լինելով Բարձրագույն դատական խորհրդի անդամներ, իրենց գործունեության շրջանակում ունեն ավելի լայն շփումներ, եթե սրան ավելացնենք նաև հայկական իրականությունում շատ հաճախ հանդիպող կոլեգիալ սոլիդարության չգրված սկզբունքը, ապա ակնհայտ է, որ ԲԴԽ անդամն ընտրվելու շատ ավելի մեծ շանսեր ունի, քան հեռավոր մարզի դատարանում աշխատող դատավորը:

Այս փաստարկի օգտին է խոսում այն հանգամանքը, որ ՀՀ դատական իշխանության պաշտոնական կայքի (court.am) ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ Բարձրագույն դատական խորհրդի ստեղծումից առ այսօր եղել են 3 և ավելի դեպքեր, երբ Բարձրագույն դատական խորհրդի անդամները, երբ դիմել են ընդգրկվելու Վերաքննիչ և Վճռաբեկ դատարաններում առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակներում, դիմումները հաստատվել

են Բարձրագույն դատական խորհրդի կողմից: Այսինքն՝ չի եղել գեթ մեկ դեպք, երբ ԲԴԽ անդամը դիմի առաջխաղացման համար և նրա դիմումը մերժվի ԲԴԽ անդամների կողմից:

Այս հարցի հետ կապված միջազգային փորձի ուսումնասիրությունից հետևում է, որ որդեգրվել է այն մոտեցումը, որ Բարձրագույն դատական խորհրդի անդամները չեն կարող իրենց պաշտոնավարման ընթացքում նշանակվել վերադաս դատարանի դատավոր կամ պաշտոնավարման ժամկետում ազատվում են դատավորի պաշտոնից, որը մեկ անգամ ևս վերահաստատում է պաշտոնավարման ընթացքում համամասնության պահպանման անհրաժեշտությունը և վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարաններում առաջխաղացման ենթակա ցուցակներում Բարձրագույն դատական խորհրդի անդամի ընդգրկման անթույլատրելիությունը:

Մասնավորապես, **Խորվաթիայի Հանրապետությունում**, Բարձրագույն դատական խորհրդի պաշտոնավարման ընթացքում դատավորների կազմից անդամներ չեն կարող նշանակվել վերադաս դատարանի դատավորի պաշտոնում կամ ընտրվել դատարանի նախագահ[1]:

Նմանատիպ իրավակարգավորում է նախատեսված նաև **Ֆրանսիայի Հանրապետությում:** Ըստ այդմ, նախատեսված է, որ Բարձրագույն դատական խորհրդի դատավոր անդամներին իրենց պաշտոնավարման ընթացքում արգելվում է աստիճաններով առաջադիմել, առաջադիմել ոչ հիերարխիկ պաշտոնի կամ նշանակվել այլ պաշտոնի[2]:

Չնայած Սերբիայի Հանրապետությունում նույնաբովանդակ կարգավորում նախատեսված չէ, այնուամենայնիվ հարկ է նշել, որ Բարձրագույն դատական խորհրդի դատավոր անդամները պաշտոնավարման ժամկետում ազատվում են պաշտոնից և այլ դատարանում չեն կարող դատավոր նշանակվել[3]:

Նշվածով պայմանավորված՝ անհրաժեշտություն է առաջացել «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքում կատարել փոփոխություններ և լրացումներ ու վերացնել ներկայումս առկա հակասահմանադրական պրակտիկան:

---

[1] Տե՛ս https://legislationline.org/sites/default/files/documents/7f/ODIHR%20Comparative%20Note%20on%20Models%20of%20Judicial%20Councils%20as%20Independent%20and%20Self-Governing%20Bodies%20RUS.pdf հղումով, կետ 63

[2] Տե՛ս https://legislationline.org/sites/default/files/documents/7f/ODIHR%20Comparative%20Note%20on%20Models%20of%20Judicial%20Councils%20as%20Independent%20and%20Self-Governing%20Bodies%20RUS.pdf հղումով, կետ 139

[3] Տե՛ս նույն հղումով, կետ 163